

ՎՐԱՅ ՊԱՏՐԻԱՐքի ԱՅՑԸ ԵՐԱՒԱՂԵՄ

30 Մայիս, Աւրբար երեկոյ, Պէտ-Կուրեկոս օգակայան հասաւ Համայն Վրաստանի Պատրիարք-Կարողիկոս Ամեն. Տ. Ելիաս Բ. ք Թիմիլիսէն Ս. Երկիր առաջնորդող օգանաւոր: Բարձրաւուրուն հոգեւորականը կու գար իրեւ հիւրը Յունաց Ամեն. Տ. Պէնեկիքրօս Ա. Պատրիարքին: Թթվական տիրապեսուրեան օրեւէն ի վեր, առաջին անգամն եւ որ Վրացական Օրբունի Եկեղեցւոյ պետ մը այցի կու գար Ս. Երկիր:

Օդակայաննեն մէջ, մեծապատիւ Հիւրը դիմաւուրելու եկած էին զանազան համայնքներու ներկայացուցիչներ: Մեր կողմէ կային Գերե. Տ. Կիւրեղ Եպո. և Տ. Անուշաւան, Տ. Խոպես և Տ. Մանուկ վարդապետներ: Ենախումբը հասաւ նրուսաղեմ:

Յաջորդ օր, 31 Մայիս, կիսուք առաջ ժամը 11ին, Մերազան Հիւրը, իրեն ընկերայոլ բարձրաւասինան հոգեւորականներուն նետ, հանդիսաւոր մուտք գործեց-Ս. Յարութեան Տաճար: Գերե. Տ. Կիւրեղ Եպո. կը զիսաւուրե դիմաւուրեան եկած հայ եկեղեցական դասը:

Նոյն երեկոյ ժամը 7.30ին, Ամեն. Ս. Հիւրին ի պատիւ ընդունելուրիւն մը սարքաւած էր Պատրիարքաւանի դանիլինին մէջ: Ժամ մը սուսոց արդէն եռուզեռը սկսուծ է Վանիք աւագ մուտքին: Ժամը 6.45ին, Տ. Կիւրեղ Եպո. Գոբիկեանի զիսաւուրեամբ (ի բացակայուրեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ որ կը գտնուե Պաւլկարիա, Լուսաւագապես Գերե. Տ. Հայրիկ Արքեպո.ի՝ օր կը գտնուե Լիբանան, իրեւ Ս. Արքուոյ ներկայացուցիչը 25 Մայիսին Անդիխասի մէջ կատարուած Միւլունօնների աւարողուրեան էւ Գերե. Տ. Շահն Արքեպո.ի՝ օր կը գտնուե Աւստրալիա, մասնակցելու Մելպուսնի Եկեղեցական Համաժողովին), ամբողջ Միաբանուրիւնը հոմբայ կ'ելլէ զեափի Յապակի դրան նրապարակը: Առջեւէն կը տողացնեն Հայ Երիտ. Միուրեան Արիներն ու Արենոյ-Եները, աւելի փայլ մը տալու համար պատկառելի բաֆորին: Քիչ ես կը ժամանէն Մեծապատիւ Հիւրը: Իրեն ընկերացու բարձրաւուրեան հոգեւորականը կապի Յապակի դրան նրապարակը: Առջեւէն կը տողացնեն Հայ Երիտ. Միուրեան Արիներն ու Արենոյ-Եները, աւելի փայլ մը տալու համար պատկառելի բաֆորին: Քիչ ես կը ժամանէն Մեծապատիւ Հիւրը: Իրեն ընկերացու բարձրաւուրեան հոգեւորականը կապի Յապակի դրան նրապարակը:

Եաւ Յունաց Միաբանուրենէն Արքեպիսկոպոսներ, ինչպէս Եաւ օրեւ Ս. Երկիր այցելող Խուս բարձրաւասինան հոգեւուրականներէ բաղկացած պատուիրակուրիւնը, զիսաւուրուրեամբ Մինսի Առաջնորդ Գերե. Տ. Ֆիլարեկ Մրգազանին:

Մայրավաններ դրան, Մեծապատիւ Հիւրեր կը դիմաւուրուին երկարաւու ծափանարուրիւններով: Եկեղեցւոյ զարին մէջ կը կազմուի «Հշաւափառ»ի բաֆորը, առաջնորդելու համար Պատուաժան Հիւրերը Մայր Տաճար: Վեց Պատրիարքը ուղարկեց Ս. Երկիր կատարելի մատուքը, ուր իր ուխտը կատարելի ես, բոլորն ալ ուղղուեցան եկեղեցւոյ դասը: Հոն նախ խօսի առաջ Գերե. Տ. Կիւրեղ Եպո., որ Անգլերէնով խնամուած ուղերձ մը կարգաց, դրուածելով Հայ եւ Վրացի ծոլովուրդներու եւ Եկեղեցիներու գարուուր բարեկամուրիւնը, իրեւ դրացի եւ բախտակից ծոլովուրդներ: Ցաւ յայտնեց Ս. Պատրիարք Հօր բացակայուրեան համար:

Վեց Պատրիարքը խօսեցաւ Խուսներն լեզուով, որ ընդհաւայ բարգմանուեցաւ Անգլերէնի: Ցիսց այն խոր եւ բայց տապաւուրիւնը զոր կրած էր վերցեր Մայր Արքու Ս. Էջմիածին կատարուծ իր այցելուրենէն եւ յայտնեց իր զինունակուրիւնն ու երախաւուրիւնը այս ընդունելուրեան համար: Ենոյ Մերազան Պատրիարքը Եկեղեցական բաֆորով եւ երգեցողուրեամբ առաջնորդուեցաւ Պատրիարքանին դահիլնը, ուր հոգեւորական եւ պետական ականաւոր դէմքե եւս հրաւիրուած էին ընդունելուրեան:

Կիրակի, 1 Յունիսի առաւօսուն, Հիւր Պատրիարքը հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Ս. Յարութեան Տաճարի Յունաց (Քաթոլիկոնի) բաժնին մէջ եւ յուսանուէրներ բաժնեց ներկաններուն: Ապա այցելեց այլազան բաժինները Քրիստոնուրեան Մայր Տաճարին:

Նոյն օրը, երեկոյեան, Յունաց ծերունակ Պատրիարքը փառայեղ ընդունելուրեամբ մը պատուեց իր Հիւրը: Զիրենեաց լեռն վրայ գտնուող Խնթէրքոնթինէնթալ տեղ պանդոկի մէջ տուած այս ընդունե-

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Դպրոցական տարեփակի տոկով, Մայիս և Յունիս ամիսներու ընթացքին կատարուեցան Ա. Աթոռոյս վարժարաններու ամավերջի հանդէօները:

Ա. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի տարեկան Դաշտահանդէսը, նախորդ տարիներու նման, կատարուեցաւ Ամավերջի Քննութիւններէն առաջ:

Կիրակի, 11 Մայիս, կէսօրէ ետք ժամը 4 ին, ծնողներու և հետաքրքիրներու ընտրանի բազմութիւն մը փութացած էր նախկին Ժամանակ. Վարժարանի Մարզագաշտը, հանգիստանս ըլլալու վարժարանէն ներս դպրոցական տարեշրջանի ընթացքին իրազարծուած Փիզիքական դաստիարակութեան ընդհանուր արդիւնքին:

Երկու ժամերու ընթացքին գործադրուած մարզական ըստ բաւականին ճռի և յաջող յայտագիրը ներկաները քերաւ այն համոզութին թէ վարժարանին Մարզիչ Պր. Յակոբ Նահարեան ոչինչ էր խնայած մեր երկսեռ ուսանողութիւնը մարմնապես աւելի ճկուն ու կայտառ գործներու իր ջանողրութեանը մէջ:

Երկուական մրցորդ խումբներու բաժնուած մեր երկսեռ աշակերտութեան կատարած վազքերէն, մարզական վարժութիւններէն, զուարձախաղերէն, գրօշարշաւէն և պարանագութենէն ետք Տեսուչ Գերց. Տ. Կիւրեղ Եպս. յաջող մարզիկները վարձատեց բաժակներով ու մէտաներով:

Յաջորդ Կիրակի, 18 Մայիս, Քննութիւններէն անմիջապէս առաջ, կատարուեցաւ Տարեկան Պազարը վարժարանիս:

1 Յունիս, Կիրակի կէսօրէ ետք, Հայ Երիտասարդաց Միութեան սրահին մէջ կայացած Ա. Թարգմանչաց Մանկապարտէզի բաժնի Ամավերջի Հանդէսն ալ անցաւ նոյնքան յաջող ու հաճելի: Երեք դաստիարաններու բաժնուած մեր փոքրիկները, Նոխակրթարանի Ա. Կարգի սաներուն հետ միատեղ, հանդէս եկան սատանաւորներով, մարզական խաղերով, տրամախօսութիւններով և հայկական պարերով, երկու ժամեր շարունակ խլելով ծափն ու քրքիչը ներկաներուն, ինչ որ անուրանութիւն փառան էր Մանկապարտէզի երեք շնորհալի դաստիարակչուններուն ինն ամիսներու ընթացքին տարած մանկավարժական խնամքու ու հոգածու աշխատանքին:

Հանդէսի աւարտին, Մազիկ գտարանի 22 երկսեռ փոքրիկները մանկական աղու ձայնով երգած Հրամաշատի Երգով «Մասա Բարով» ըսին Մանկապարտէզին և իրենց վկայականներուն հետ ստացան նաև օրինութիւնը Գերց. Տեսուչ Սրբազնին:

Երկրորդական բաժնի Ամավերջի Հանդէսը կայացաւ յաջորդ Կիրակի, 8 Յունիսի երեկոյեան, վարժարանի սրահին մէջ, որ ժամանակէն առաջ լեցուած էր ծնողներու և հրաւիրեալներու կոկիկ բազմութեամբ: Ներկայ էին նաև Հոգէ. Հույրե.

Լուրեան մեր կողմէ ներկայ եղան Գերէ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգէ. Տ. Ասպետ Վրդ. և Հոգէ. Տ. Մանուկէ Վրդ.:

Երեխտբի, Յունիսի 3ին, Կոօնից Նախարար ընդունելուրիւն մը սարեց ի պատի Վրաց Պատրիարքին: Մեր կողմէ ներկայ եղաւ Գերէ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեան:

Նախագահինիկ եսք Յունաց Վանքի Մայր Տաճարի — Ա. Կոստանդիանոս — անուան տեսախմբուրեան հանդիսութիւններուն եւ այցելելի եսք Ա. Երկրի զլիաւուր Մբավայրեր, Ա. Հիւրը 5 Յունիսին վերադարձաւ Թիմիս, յաջող ուխտագնացուրիւն մը կատարած ըլլալու հողեկան գոնունակուրեամբ: